«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կառուցողական մեթոդների կիրառման արդյունավետությունը ուսուցման գործընթացում

Մասնակից՝ Լաուրա Գրիգորյան

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Մարզ՝ Արմավիր

Դպրոց՝ Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան էջ 3
2. Գրական ակնարկ էջ 4
3. Գործնական համատեքստ էջ 6
4. Հետազոտական ընթացք էջ 10
5. Ամփոփում էջ 15
6. Գրականություն էջ 16

ՆԱԽԱԲԱՆ

Սոցիալական նոր տեղաշարժերի և կրթական ոլորտի բարեփոխումների այս ժամանակաշրջանում դպրոցը կոչված է դաստիարակելու հասարակության կարիքներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով, համամարդկային և ազգային արժեքներ կրող մարդ և քաղաքացի: Այս նպատակի իրագործման առաջին քայլը ուսուցման որակի բարելավումն է, քանի որ միայն համակարգված և խորը գիտելիքները կարող են վերաճել կարողությունների և հմտությունների: Իհարկե, ուսուցիչները գիտակցում են, որ ուսուցման ավանդական ձևերով անհնար է հասնել ցանկալի արդյունքի, սակայն նորի կիրառումն էլ պետք է նպատակային լինի. դպրոցում լայն կիրառում գտած խմբային աշխատանքը հաճախ սահմանափակվում է խմբերի ստեղծումով և չի պարունակում համագործակցության տարրեր: Կրթական նոր պրակտիկայի՝ ուսուցման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնախնդիրները և դժվարությունները պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ «գոյություն ունեցող բազմապիսի կառույցները, գիտակցաբար կամ անգիտակցաբար, աշխատում են իրեն սպառած ուսուցման խմբային եղանակի պահպանման համար: Սկզբունքորեն դա բնական է: Երբ խոսքը ոչ թե մասնավոր նորարարական հնարքների կամ ռացիոնալիզատորական հայտնագործությունների մասին է, այլ ուսուցման պատմահասարակական նոր եղանակի գիտականորեն հիմնավորված տեսլականի, ապա հանրային գիտակցության ոչ չարամիտ դիմադրությունն անխուսափելի է»:[1]

[1] Կառուցողական կրթության հիմունքները, Այռեքս, 2004, էջ 56-60:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատկերացումն այն մասին, որ ուսուցիչը աշակերտների համար միայն տեղեկատվության աղբյուր է, արդեն չի բավարարում: Ուսուցչի դերը այլ նշանակություն է ձեռք բերում, մասնավորապես՝ աշակերտներին ուսուցչի գործունեության ոլորտի օբյեկտից հարկավոր է փոխարկել ուսումնական նյութի յուրացման համար անհրաժեշտ և սեփական գործունեության ոլորտի սուբյեկտի, որովհետև աշակերտի ուսուցումը և զարացումը կատարվում է միայն նպատակաուղղված ուսումնական գործունեության ընթացքում:

Կարծում եմ, անհրաժեշտ է, որ ուսուցիչը վերանայի և վերափոխի իր ուսումնական գործունեությունը և իր աշխատանքը կազմակերպի կառուցողական մեթոդներով: Կառուցողականությունն ինքնակարգավորող գորունեություն է, որի գաղափարական հենքն այն է, որ ուսումնառությունը պասիվ (կրավորական) գործընթաց չէ, ոչ էլ սոսկ ընդօրինակում կամ յուրացում, այլ ակտիվ գործընթաց, որն ապահովում է նոր գիտելիքների ձեռքբերումըէ խարսխվելով սովորողի գիտակցության մեջ արդեն ձևավորված նախկին գիտելիքների վրա:

Ուսումնառության կառուցողական մեթոդները սովորողին օգնում են յուրացնել տեղեկությունները և վերաձևակերպել կամ վերափոխել դրանք, որոնք կօգնեն ստեղծելու կիրառելի մի համակարգ, որը հնարավորություն կտա փորձարկելու այս նոր մետեցումները և համոզվելու, որ ուսուցիչը ոչ թե սոսկ տեղեկություններ հաղորդող և վերահսկող է, այլ միջնորդ սովորողների ու միջավայրի միջև:

Կարելի է ներկայացնել կառուցողական ուսումնառությանը վերաբերող մի քանի ընդհանրացումներ կամ դրույթներ:[1]

- Կառուցողական մեթոդներով աշխատող ուսուցիչը ընդունում և խթանում է սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը:

[1] Կառուցողական կրթության հիմունքները, Այռեքս, 2004, էջ 56-60:

- Կառուցողական մեթոդներով աշխատող ուսուցիչը փոխներգործուն, մանիպուլյատիվ և ֆիզիկական միջոցներին զուգահեռ կիրառում է չմշակված, նախնական տվյալներն ու սկզբնաղբյուրները:
- Առաջադրանքը ձևակերպելիս ուսուցիչը կիրառում է ճանաչողական եզրաբանություն, օրնակ՝ «դասակարգել», «կանխատեսել», «ստեղծել», «վերլուծել» և այլն:
- ՈՒսուցիչը թույլ է տալիս, որ սովորողներն իրենց պատասխաններով ուղղորդեն դասը, վերափոխեն դասավանդման ռազմավարությունները, մեթոդներն ու դասի բովանդակությունը:
- ՈՒսուցիչը որևէ գաղափարի, հասկացության մասին սեփական պատկերացումներն սովորողներին հասցնելուց առաջ նախ պարզում է տվյալ հասկացության մասին սովորողների գիտելիքներն ու կարծիքը:
- ՈՒսուցիչը խրախուսում է սովորողներին երկխոսության մեջ մտնել թե իր և թե միմյանց հետ:
- ՈՒսուցիչը խրախուսում է հարցադրումները՝ սովորողներին առաջարկելով բովանդակային և բաց հարցեր, ինչպես նաև դրդում է նրանց՝ հարցեր ուղղելու համար:

Փոխակերպումները տեղի են ունենում նորհասկացությունների գոյացման ճանապարհով, իսկ դրանց գոյացումը ենթադրում է նախկին գաղափարների վերանայում: Յուրաքանչյուր նախկին փորձառություն մտածողության կառույցների կամ կաղապարային նմուշների հիմքն է կազմում: Ի վերջո, մենք կարող ենք իմանալ միայն այն, ինչ ի վիճակի ենք փորձարկել:

Այս մոտեցումը հատկապես կարևոր է Հիմնական դպրոցի ուսուցիչների համար, քանի որ Հիմնական դպրոցի աշակերտները ունեն հենքային գիտելիքներ, որոնց խորացումը կբերի նոր գաղափարների և գիտելիքների:

Հիմնական դպրոցի ամենօրյա աշխատանքի ընթացքում ուսուցիչներն առնչվում են բազմաթիվ խնդիրների՝ աշակերտների՝ նոր միջավայրում ադապտացիոն շրջանի հաղթահարումից մինչև ծրագրերի և դասագրքերում եղած ուսումնական նյութերի անհամապատասխանություն: Մեր խնդիրն է ներկայացնել, թե մայրենիի ուսուցման որակի բարելավման ուղղությամբ ինչ աշխատանքներ կարող է իրականացնել ուսուցիչը,

քանի որ մայրենին դպրոցական կրթության մեջ կարևորագույն տեղ է գրավում՝ լինելով և՛ ուսումնառության առարկա, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Վերջին տարիներին մեր դպրոցներում տեղ գտած քերականական կանոնների, սահմանումների, հոլովման ու խոնարհման հարացույցների սերտողական ուսուցումը արգելակում էր քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակահարմար կիրառելուն: Դասավանդման գործնական ուղղվածությունն ապահովելու համար լեզվական նյութի ուսուցումը պետք է պարունակի հատուկ տիպի բնագրեր, գործնական բնույթի վարժություններ, ինքնուրույն կերպով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:[1]

Մյուս կարևոր պահանջը լեզվի գործածության կապակցումն է իրական հաղորդակցման տարբեր պայմանների հետ՝ կախված տվյալ իրադրությունից, խոսողի նպատակից, լսարանի առանձնահատկություններից:

Առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի համաձայն նախատեսվում է լեզվական յուրաքանչյուր միավորի ուսումնասիրության ժամանակ ուշադրություն դարձնել նրա գործառական և ոճական արժեքին, համապատասխան վարժությունների միջոցով ամրապնդել դրանց գործնական կիրառությունը խոսքում:

Խոսքի մասերը, հոլովումն ու խոնարհումը նույնպես ուսուցանվում են ոչ միայն քերականական ձևավորման, այլև խոսքում գործնականորեն կիրառվելու առանձնահատկությունների և ոճական նպատակադրության տեսակետից:

Լեզվի ուսուցման հարցում այս մոտեցումները տարբեր ձևակերպումներով արծարծվել են հայ լեզվաբանության մեջ և դարերի ընթացքում միավորել են և ձեռք բերել նոր որակներ: Խ.Աբովյանի մանկավարժական սկզբունքները այն հենքն էին, որի վրա զարգացավ հայոց լեզվի գործնական ուսուցման տեսությունը:

Քերականության ուսուցումը գերազանցապես գործնական նպատակներ պիտի հետապնդի. Ոչ թե քերականություն քերականության համար, այլ քերականություն

[1] «Հայոց լեզվի առարկայական չափորոշիչներ»:

աշակերտի բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար: Ավելի քիչ քերականության սերտում, ավելի շատ ընթերցանություն, պատմողական խոսք, արտասանություն, գրավոր ու բանավոր շարադրանք, բառապաշարի ու ոճական հնարքների հարստացում: Լեզուն իբրև սոսկ քերականական օրենքների ժողովածու ներկայացնելը պիտի համարել մեթոդիկայի այսօրվա ամենամեծ թերությունը: Գուցե կարիք կլինի քերականության դպրոցական ծրագրի բեռնաթափմամբ որոշ ժամեր տրամադրել ոճական վարժություններին, գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը:[1]

Հայ լեզվաբանության Մեծ երախտավորը կարծես նախանշում էր արմատական փոփոխությունների այն ճանապարհը, որը կօգնի ձևավորելու կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ:

Այս ընդհանրական պահանջները որոշակիացված են հայոց լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշիչներում և ծրագրերում:

Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի քննությունը (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) Հիմնական դպրոցում կարևորվում է հատկապես կապակցված խոսքն ուսուցանելիս, լրատվական ժանրերն ուսումնասիրելիս, քանի որ նման կարգի աշխատանքների համար անհրաժեշտ են խոր լեզվաքերականական գիտելիքներ, բառերի ձևափոխություններով պայմանավորված քերականական և ոճական տարբերակման իմացություն:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև գործնական գրությունների իմացությանը, նրանցում գործածվող քերականական և կաղապարային ձևերի կազմությանն ու գրությանը:

8-րդ դասարանի ծրագրում ուշադրություն է դարձվում նաև արևմտահայերենի բառաքերականական իրողությունների քննությանը: Նման ուսումնասիրությունները նպաստում են համեմատության միջոցով վեր հանել հայոց լեզվի երկու տարբերակների՝ արևմտահայերենի և արևելահայերենի ոչ միայն բառային, այլև քերականական, կառուցվածքային ձևույթների տարբերությունները: Սովորողին հնարավորություն է տրվում այդ տարբերակման հիման վրա ընթերցել և մեկնաբանել արևմտահայերենով գրված տեքստերը, ինչպես նաև բարբառներով գրի առնված

[1] Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978, էջ 56:

բանահյուսական նմուշները (հեքիաթ, առած, ասացվածք), կարողանալ վերարտադրել կարդացածը, պատրաստել որևէ զեկուցում կամ աշխատանք՝ սովորողներին ներկայացնելու նպատակով, խորացնել և ամրապնդել ձևաբանության լեզվական գիտելիքները, դրանցից օգտվելով՝ տարբեր բնույթի և ոճի տեքստեր կազմելու կարողություններ ձեռք բերել, կարողանալ կատարել տեքստերի ձևաբանական վերլուծություն՝ առանձնացնելով գոյականի և բայի հարացուցային ձևերը և բնութագրել դրանք, գրել թեստային աշխատանք գոյականի և բայի հարացուցային ձևերի վերաբերյալ:

Գոյականի, ածականի և մակբայի ոճական արժեքը (նաև կիրառության ոլորտը) խոսքում պարզելու համար նպատակահարմար է աշխատանք կատարել բնագրի վրա՝ գոյականի, ածականի և մակբայի մակդրային կիրառության վերաբերյալ:

12-րդ դասարանի ծրագրում սովորողների լեզվաքերականական իմացությունները պետք է դրսևորվեն վերլուծական շարադրություններում, տարբեր ոճերի կիրառումով և լեզվական նուրբ զգացողությունների ընկալմամբ կապակցված խոսքում:, ռեֆերատներում՝ պահպանելով գիտական ոճի առանձնահատկությունները:

Արդեն ասվել է, որ խոսքի մասերի քերականական հատկանիշների ուսուցումն սկսվում է 7-րդ դասարանում: Հիմնական դպրոցում քերականական հենքային գիտելիքների ակտիվացման ճանապարհով ուսումնասիրվում է քերականական միջոցների ու կառույցների ոճական հնարավորությունները և նրանց դերը խոսքի կառուցման հարցում: Քերականական ոճաբանությունը պարզում է, թե լեզվում ինչ քերականական զուգահեռ ձևեր ու կառույցներ կան, ինչպես օգտագործել դրանք տեղին և նպատակահարմար:

Հիմնական դպրոցի ուսուցչի խնդիրն է մեթոդի ճիշտ ընտրությամբ գտնել համագործակցության ձևեր, խթանել աշակերտների՝ հետազոտելու, վերլուծելու, ստեղծագործելու և եզրահանգումներ կատարելու կարողությունները, զարգացնել նպատակահարմար խոսք կառուցելու ունակություններ:

Քերականորեն ճիշտ կառուցված խոսքը դեռևս ճշմարիտ չէ, եթե նրանում հաշվի չեն առնված խոսքային իրադրություններ և նրա բաղկացուցիչները: Խոսելու կամ գրելու ժամանակ կարևոր է իմանալ, թե առկա զուգահեռ ձևերից ու կառույցներից յուրաքանչյուրը խոսքի ինչ տեսակների և ոճերի է հատուկ, դրանցից որի գործածությունն

է տվյալ դեպքում ճիշտ և նպատակահարմար, որ դեպքերում են դրանք ազատ կերպով իրար փոխարինում, իմաստային ինչ նուրբ տարբերություններ է առաջ բերում տվյալ փոխակերպումը:

Հետազոտությունն իրականացրել եմ հետևյալ գործնական քայլերով.

Դասարանում սովորում են 30 աշակերտներ, որոնցից 10-ը չունեն բավարար նախագիտելիքներ և դժվարանում են որոշ թեմաների ուսումնասիրության ժամանակ:

1-ին դասաժամ - կազմել դասի պլան «Ածականի և նրա համեմատության աստիճանների ոճական կիրառությունը» թեմայով:

Պատրաստել անհրաժեշտ պարագաներ, նյութեր, քարտեր՝ գեղարվեստական գրականությունից բերված օրինակներով:

Իրականացնել խմբային աշխատանք Եռաթև, ԳՍՈՒ աղյուսակի, Վենի դիագրամի միջոցով:

2-րդ դասաժամ - կազմել դասի պլան «Անձնական դերանունների ոճական կիրառությունը» թեմայով:

Պատրաստել խմբային հետազոտություն՝ կիրառելով պրիզմա և մտքի քարտեզ մեթոդները:

3-րդ դասաժամ – կազմել դասի պլան «Բայի եղանակաժամանակային ձևերի ոճական հնարավորությունները» թեմայով:

Պատրաստել թիմային առաջադիմություն՝ քարտեզագրում, ԳՍՈՒ մեթոդներով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Քանի որ այսօր դպրոցում հայոց լեզվի դասավանդումը զուգակցվում է երկու կողմ՝ տեսական լեզվաբանական գիտելիքներ և լեզվի գործնական կիրառություն, շատ կարևոր է, որ հայոց լեզվի ուսուցիչը հստակ պատկերացնի իր գործունեության առաջնային նպատակները: Ելակետային է այն սկզբունքը, որի համաձայն առավելությունը տրվում է բուն լեզվի իմացությանը, այսինք՝ ճանաչողական, հաղորդակցվելու, համագործակցելու, ստեղծագործելու և ինքնուրույն աշխատելու կարողություններին, իսկ տեսական գիտելիքները կոչված են նպաստելու այդ կարողությունների զարգացմանը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ միայն համակարգված և խորը գիտելիքները կարող են վերաճել կարողությունների և հմտությունների:

Այդ պատճառով էլ հմուտ ուսուցիչը պետք է այնպես պլանավորի դասը, որ քերականական գիտելիքները նպաստեն աշակերտի լեզվի մաքրությանը, օգնեն ձևավորել կարողությունների արժեքների այն համակարգը, որը հասարակությունը ակնկալում է հանրակրթությունից:

Խոսքի մասերը նույնպես ուսուցանվում են ոչ միայն քերականական ձևավորման, այլև խոսքում կիրառվելու ու առանձնահատկությունների և ոճական նպատակադրության տեսանկյունից:

1-ին դասաժամ - Ածականի ուսուցումը կազմակերպեցի մի քանի հատկանիշներ ուսուցանելով միաժամանակ, նույն դասի ընթացքում: Այսպես, տեսական բացատրություններին հատկացնելով նվազագույն ժամաքանակ, համագործակցային ուսուցման եղանակով նյութը սովորեցրեցի աշակերտների միջոցով՝ նրանց գործնական աշխատանքների մղելով:

Խմբային աշխատանք – Դասարանը բաժանվեց 4 խմբի: 1-ին և 2-րդ խմբերի աշակերտները եռաթև աղյուսակի միջոցով ներկայացրին ածականի համեմատության աստիճանների նմանություններն ու տարբերությունները: 3-րդ և 4-րդ խմբերի

աշակերտները Վենի դիագրամի միջոցով ներկայացրին ածականի համեմատության աստիճանները։ Այնուհետև բոլոր խմբերի հետ իրականացվեց քարտային աշխատանքը։ Դասի վերջում աշակերտներն անհատական կազմեցին ԳՍՈՒ աղյուսակը։

Հիմնական դպրոցում որակյալ ուսուցում կազմակերպելու անկյունաքարը միջին դպրոցում ստացած գիտելիքների ակտիվացման միջոցով նոր համակարգված գիտելիքների ձեռքբերումն ապահովող կարողությունների և հմտությունների խթանումն է: Օրինակ՝ աշակերտները սահմանում են ածականը՝ որպես խոսքի մաս, միջին դպրոցում սովորած գիտելիքների հիմքի վրա, ապա վարժություններով հիմնավորում են սահմանումը:

Ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի ուսումնական նյութերի ընտրության վրա. կարևոր է թեմային առնչվող հանձնարարությունները ձևակերպել գեղարվեստական խոսքի ընտիր նմուշների վրա: Ուսումնական բոլոր նյութերը (առաջադրանքների շտեմարաններ, բառարաններ, գնահատման սանդղակներ, վարժություններ, գրական-երաժշտական միջոցառումների ծրագրեր և այլն) ստեղծվում են ուսուցիչ-սովորող, սովորող-սովորող համատեղ գործունեության ընթացքում որպես համագործակցության արդյունք:

2-րդ դասաժամ - Անձնական դերանունների ոճական կիրառությունը։ Դերանունները ցույց են տալիս կամ առարկա (սա, դա, նա) կամ հատկանիշ (այսպիսի, այնդպիսի, այնպիսի), կամ թիվ (այսքան, այնքան, այդքան), կամ հատկանիշի հատկանիշ (այսպես, այդպես, այնպես), բայց չտարբերակված, ընդհանուր ձևով՝ ի տարբերություն գոյականների, ածականների, թվականների և մակբայների, որոնք տարբերակված առարկաների և հատկանիշների անվանումներ են:

Նյութական խոսքի մասերից գոյականը, դերանունը, բայը ձևաբանական տեսակետից բնորոշվում են նրանով, որ ունեն թեքման ձևեր, այն է՝գոյականն ու առարկայական իմաստ արտահայտող դերանունները հոլովվում են, իսկ բայերը խոնարհվում են: Ժամանակակից հայերենում իրենց հիմնական գործածության ժամանակ թեքման ձևից զուրկ են ածականն ու թվականը, սակայն սրանք լեզվում հաճախ են հանդես գալիս գոյականական կիրառությամբ և այդ դեպքում հոլովվում են:[1] Այդ նպատակով կիրառել

[1] Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 72:

եմ ուղղորդված պրիզմա մեթոդը: Դերանունների վերաբերյալ գիտելիքները ակտիվացնելու նպատակով հանձնարարվեց խմբերով ստեղծել մտքի քարտեզ, ներկայացնել անձնական դերանունների քերականական հատկանիշները: Խմբերը աշխատում են դասագրքով՝ նշումներ կատարելով փոխգործուն գրառումների համակարգով իրենց անհատական աղյուսակում:

Նյութական խոսքի մասերի ուսուցման կարևոր հարցերից է խոսքի մասերի փոխանցումը. կարևոր է, որ աշակերտները ընկալեն, որ խոսքիմաստային կարգերը մեկընդմիշտ տրված քարացած կարգեր չեն: Լեզվի զարգացման ընթացքում բառը մի խոսք մասից կարող է անցնել մյուսին:[1]

3-րդ դասաժամ - Քարտեզագրման միջոցով աշակերտները կատարեցին դիմավոր բայերի քերականական կարգերի քննություն: Դասարանը բաժանվեց խմբերի ըստ բայերի արտահայտած իմաստների (ֆիզիկական, մտածական, հոգեկան դրության, վիճակ, ընթացայնություն) և աշակերտները թվարկեցին բայեր մտագրոհի եղանակով և խմբարեցին ըստ վերը նշված իմաստների: Խմբերը ներկայացրեցին իրենց քարտեզները:

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից:

Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ցանկացած թեմայի համակարգված ուսուցումը ենթադրում է առանձին դասաժամերի բովանդակային շարունակական

[1] Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 42:

ամբողջականություն: Այս առումով թեմաների ուսուցումը կարելի է արդյունավետ կազմակերպել կառուցողական մեթոդների կիրառմամբ:

Սրանք նպաստում են սովորել սովորելու կարողունակության զարգացմանը, երբ աշակերտներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Աշակերտները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Կազմակերպման տարբեր եղանակներով տարատեսակ առաջադրանքներ կատարող աշակերտները բնականաբար չեն կարող միաժամանակ ավարտել իրենց աշխատանքը: Շատ ուսուցիչներ վախենում են նման դեպքերում առաջացող «անգործության ընդմիջումներից»: Կառուցողական մեթոդով աշակերտներին հանձնարարություններ տալը, կանխում է աշակերտների անգործ մնալը և այդ ընդմիջումները նրանք լրացնում են իրենց ունակությունները զարգացնելուն ուղղված աշխատանքով կամ օգնում են նրանց հետ չմնալ:

Վերլուծելով ստացված տվյալները կարող ենք փաստել, որ հետազոտության ընթացքում աշակերտների մոտ նկատվում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ, նրանք ավելի մոտիվացված են և անհամբերությամբ սպասում են հաջորդ դասին իրականացվելիք հետաքրքիր աշխատանքներին: Դրա հետևանքով նրանք ավելի պատրաստ են գալիս դպրոց՝ ապահովելով իրենց գիտելիքների ցուցադրումն ու ակտիվ մասնակցությունը:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա կարող ենք կազմել աշակերտների հետաքրքրությունների և ստացած գիտելիքների համեմատության սանդղակը:

Հետազոտության ընթացքը հիմնված էր համագործակցային խմբային աշխատանքների վրա։ Յուրաքանչյուր խումբ (նախօրոք ձեռք բերված համաձայնությամբ) մյուսներին որևէ հարց էր ուղարկում, իսկ վերջիններս նրանց էին ուղարկում դրա ճիշտ պատասխանը։ Այդկերպ խմբերն ինքնաստուգում էին իրականացնում։

Ուսուցման համագործակցային եղանակներից յուրաքանչյուրն իր կիրառությունն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում։
Ելնելով հետազոտության արդյունքներից ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- աշխատանքի համար հատկացված ժամանակը,
- վարժությունների տեսակները,
- դասերի տեսակները,
- բովանդակությունը,
- փոխկախվածության աստիճանը։

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն աշխատանքում նախ փորձել եմ անդրադառնալ 21-րդ դարի դպրոցաշինության խնդիրներին, դրանցից բխող ուսուցման նոր մոտեցումներին և մեթոդներին:

Դպրոցը հասարակական կյանքի այն բնագավառն է, որն ամենից շատ է ենթակա փոփոխությունների ու տեղաշարժերի:

Մեր ընտրած թեման (Նյութական և թեքվող խոսքի մասեր) լեզվի ամենագործածական բաժիններից է, քանի որ առանց ձևաբանական կառույցների հնարավոր չէ կապակցված խոսք կառուցել: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճանաչելու լեզվական այլընտրանքային ձևեր, որոնք ունեն ոճական արժեք:

Բառերի ձևափոխությունների բազմազանությունը պատմական զարգացման հետևանք է, որի ընթացքը նույնպես լեզվական ուսումնասիրության նյութ է:

Թեքվող խոսքի մասերը դրսևորում են նաև անկանոնություն և այլաձևություն, որը նույնպես պատմական զարգացման հետևանք է: Հետաքրքիր է ուսումնասիրել նաև ածականի, գոյականի, թվականի, բայի (դերբայ) և մակբայի հատկանշային գործածությունը և նրանց ոճական կիրառությունները:

Հենց այս նպատակադրումով էլ մենք կարևորում եմ ձևաբանության բաժնի, մասնավորապես նյութական խոսքի մասերի ուսուցումը:

Ինչպես այս բաժնի, այնպես էլ ողջ քերականության ուսուցման գործին նպաստում են համագործակցային ուսուցման ձևերն ու մեթոդները, որոնք փորձել եմ կիրառել ներկայացրած դասերում:

Կարծում եմ՝ քերականության դասավանդման մեթոդիկան դեռևս չուսումնասիրված և չբացահայտված խոսքեր ունի, որոնք կարիք ունեն մանրակրկիտ քննության:

Իմ կարծիքով հմուտ ուսուցչի խնդիրներից մեկն էլ այն է, որ թափանցի այդ խորքերը և նորագույն մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման և սեփական ստեղծագործական մտքի շնորհիվ նպաստի մայրենիի գործնական ուսուցմանը,

սովորողների հաղորդակցման կարողությունների և ունակությունների զարգացմանը, նրանց մղի ստեղծագործական գործունեության, ձևավորի նրա արժեքային համակարգը, որի արդյունքում կդաստիարակվի բարձր գիտելիքներով և համամարդկային արժեքներ կրող մարդ և քաղաքացի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ջահուկյան Գ. «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները», Երևան, 1974:
2. Գյուլբուդաղյան Ս. «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», Երևան, 1978:
3. Ջահուկյան Գ. «Ոճաբանություն», Երևան, 1998:
4. Ասատրյան Մ. «Ժամանակակից հայոց լեզու», Երևան 2002:
5. «Կառուցողական կրթության հիմունքները», Այռեքս, 2004
6. «ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժույթուններ», Կրթության ազգային ինստիտուտ, 2008:
7. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ: